ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2322 - Ա **08 ապրիլի 2009թ.**

ՆՈՐՔԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 138 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՆԱՐԻԿ ԼԵՆԴՐՈՒՇԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ, ՆԱԶԵԼԻ ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ, ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ, ԱՆՆԱ ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Քնարիկ Լենդրուշի Բարսեղյանի (ծնված 30.03.1958թ.), Նազելի Սարգսի Վարդապետյանի (ծնված 23.06.1978թ.), Քրիստինե Սարգսի Վարդապետյանի (ծնված 19.09.1980թ.), Աննա Սարգսի Վարդապետյանի (ծնված 28.02.1987թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորքի 9-րդ փողոցի հ.138 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 432.38քմ, որից 185.6քմ մակերեսով հողամասը Քնարիկ Լենդրուշի Բարսեղյանին, Նազելի Սարգսի Վարդապետյանին, Քրիստինե Սարգսի Վարդապետյանին, Աննա Սարգսի Վարդապետյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասն է: Բնակելի տան զբաղեցրած հողամասին կից օգտագործվող 246.78քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1987 թվականը, 21.03.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիր, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 01.04.2009թ. հ.20/2-Ե/171 գրությունը, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 23.03.2009թ. հ.20-Ել-2189 եզրակացությունը, համաձայն որի Նորքի 9-րդ փողոցի հ.138 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նորքի 9-րդ փողոցի հ.138 հասցեում Քնարիկ Լենդրուշի Բարսեղյանին, Նազելի Սարգսի Վարդապետյանին, Քրիստինե Սարգսի Վարդապետյանին, Աննա Սարգսի Վարդապետյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած

հողամասի հողհատկացման հիմքերը 185.6քմ մակերեսով հողամասի չափով, բնակելի տանը կից հողամասի հողօգտագործման իրավունքը 246.78քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 432.38քմ մակերեսով հողամասի և 246.78քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Նորք 9-րդ փողոցի հ.138 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Նորքի 9-րդ փողոցի հ.138 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Քնարիկ Լենդրուշի Բարսեղյանի, Նազելի Սարգսի Վարդապետյանի, Քրիստինե Սարգսի Վարդապետյանի, Աննա Սարգսի Վարդապետյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Նորք–Մարաշ թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**